**Հավելված N 1**
**«ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով**
**էլեկտրոնային աճուրդի հրավերի**

# ԴԻՄՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## էլեկտրոնային աճուրդին մասնակցելու

«**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցել **ՀՀ Արագածոտնի մարզ Աշտարակի քաղաքապետարանի** կողմից «ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 1-ին չափաբաժնին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

«**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ն հայտնում և հավաստում է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի՝
- հարկ վճարողի հաշվառման համարն է՝ 01204713,
- բանկային հաշվեհամարն է՝ 15700050037990100,
- գործունեության հասցեն է՝ ք.Երևան 0025, Խանջյան փող. շենք 50, «Թեքեյան բիզնես կենտրոն»,
- էլեկտրոնային փոստի հասցեն է՝ info@alpha.am,
- հեռախոսահամարն է՝ +374 10 521356,
- ռուսերեն լեզվով անվանումն է՝ ООО «Фирма Альфа»:

Սույնով «**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ն հայտարարում և հավաստում է, որ՝

1) «**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձինք բավարարում են «ՀՀԱՄԱՇՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/16» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և «**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ն պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման ապահովում

2) ընթացակարգին մասնակցելու շրջանակում՝
- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու անբարեխիղճ մրցակցություն, գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:
- ստորև ներկայացնում է հայտը ներկայացնելու օրվա դրությամբ այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նշանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին (իրական շահառուներ) և հավաստում, որ իրական շահառուների մասին ներկայացված տեղեկատվությունը իրական է և չի պարունակում ոչ հավաստի տեղեկություններ:

| Անունը Ազգանունը Հայրանունը | ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը | Օտարերկրյա քաղաքացիների համար համապատասխան երկրի օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը |
|---|---|---|
| | | |

3) ապահովված է դիմում-հայտարարությունը ներկայացնելուց հետո էլեկտրոնային աճուրդի համակարգի կողմից տրամադրված եզակի ծածկագրի (PIN կոդը) անվտանգությունն ու գաղտնիությունը և դրա օգտագործմամբ էլեկտրոնային աճուրդի համակարգում ընթացակարգին մասնակցելուց բխող ցանկացած գործողություն կատարվում է համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:

«**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը ներկայացվում է՝ համակարգի միջոցով:

«**Ֆիրմա Ալֆա**» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն՝ Ռուբեն Եսայան

Digitally signed by
RUBEN YESAYAN 4005600360
Date: 2025.09.17 12:31:39 mID